

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ

**թիվ 617/2010 կանոնակարգը (ԵՄ, Եվրատոմ) փոխարինող եւ Խորհրդի
թիվ 736/96 կանոնակարգը (ԵՀ) ուժը կորցրած ճանաչող՝
Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2014 թվականի փետրվարի 26-ի
թիվ 256/2014 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)՝ Եվրոպական միությունում էներգետիկ
ենթակառուցվածքների ոլորտում ներդրումային ծրագրերի մասին
Հանձնաժողովին ծանուցելու վերաբերյալ**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,
հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը
եւ մասնավորապես՝ դրա 194-րդ հոդվածը,

հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովից ստացված առաջարկը,

օրենսդրական ակտի նախագիծն ազգային խորհրդարաններ փոխանցելուց հետո,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի¹
եզրակացությունը,

Տարածաշրջանային հարցերով կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով ընդունված օրենսդրական ընթացակարգին համապատասխան²,

քանի որ՝

- 1) Միությունում էներգետիկ ենթակառուցվածքների ոլորտում կատարվող ներդրումների ամբողջական պատկերի ձեւավորումը կարելի է Միության՝ էներգետիկայի ոլորտի քաղաքականության մշակման եւ Հանձնաժողովի կողմից էներգետիկայի բնագավառում իր գործառույթներն իրականացնելու առումով: Պարբերական եւ արդիական տվյալների ու տեղեկությունների

¹ ՊՏ C 271, 19.09.2013թ., էջ 153:

² Եվրոպական պառլամենտի 2014 թվականի փետրվարի 4-ի դիրքորոշում (պաշտոնական տեղեկագրում դեռեւս չիրապարակված) եւ Խորհրդի 2014 թվականի փետրվարի 20-ի որոշում:

մատչելիությունը Հանձնաժողովին հնարավորություն կտա կատարել անհրաժեշտ համեմատություններ ու գնահատումներ եւ առաջարկել համապատասխան միջոցառումներ՝ հիմնվելով համապատասխան թվերի եւ վերլուծության վրա, մասնավորապես՝ էներգիայի առաջարկի եւ պահանջարկի միջեւ հետագա հավասարակշռության վերաբերյալ.

- 2) վերջին տարիների ընթացքում էներգետիկ լանդշաֆտը Միության ներսում եւ դրա սահմաններից դուրս զգալիորեն փոխվել է, եւ էներգետիկ ենթակառուցվածքի ոլորտում ներդրումներն առանցքային կարելիություն են ստացել Միության էներգամատակարարումն ապահովելու, ներքին շուկայի գործունեության եւ Միությունում արդեն սկսված՝ ածխածնի արտանետումների ցածր մակարդակ ապահովող էներգետիկ համակարգերի անցնելու առումով.
- 3) էներգետիկ ոլորտի այս նոր համատեքստում պահանջվում են զգալի ներդրումներ էներգետիկայի բոլոր ոլորտների ենթակառուցվածքների բոլոր տեսակներում, ինչպես նաեւ ենթակառուցվածքի նոր տեսակների մշակում եւ շուկայում նոր տեխնոլոգիաների ներմուծում: Էներգետիկ ոլորտի ազատականացման ու ներքին շուկայի հետագա ինտեգրման շնորհիվ տնտեսական օպերատորները առավել որոշիչ դեր են խաղում ներդրումներ կատարելու մասով: Միեւնույն ժամանակ նոր քաղաքականության այնպիսի պահանջները, ինչպիսիք են վառելիքի կազմի ձեւավորման վրա ազդող նպատակները, կփոփոխեն անդամ պետությունների՝ նոր եւ (կամ) արդիականացված էներգետիկ ենթակառուցվածքի ստեղծմանն ուղղված քաղաքականությունները.
- 4) այս համատեքստում առավել մեծ ուշադրություն է դարձվում Միությունում էներգետիկ ենթակառուցվածքների ոլորտում կատարվող ներդրումներին, մասնավորապես՝ որոշ խնդիրների առաջացումը կանխատեսելու, լավագույն փորձի տարածումը խթանելու եւ Միության էներգետիկ համակարգի հետագա զարգացման մասով առավել մեծ թափանցիկություն ապահովելու նպատակով.

- 5) Հանձնաժողովը եւ մասնավորապես դրա՝ Էներգետիկայի գծով շուկայի ուսումնասիրության բաժինը հետեւաբար իրենց տրամադրության տակ ունենում են ճշգրիտ տվյալներ ու տեղեկություններ՝ ներդրումային ծրագրերի, այդ թվում՝ Միության էներգետիկ համակարգի ամենանշանակալի բաղադրիչների շահագործման դադարեցման վերաբերյալ.
- 6) Միությունը հետաքրքրություն է ցուցաբերում արտադրության, փոխադրման եւ պահեստավորման կարողությունների կանխատեսելի զարգացումների ու էներգետիկայի տարբեր ոլորտներում նախագծերի վերաբերյալ տվյալների եւ տեղեկությունների նկատմամբ եւ կարելու է դրանք հետագա ներդրումներ կատարելու տեսանկյունից: Հետեւաբար անհրաժեշտ է ապահովել, որ Հանձնաժողովը ծանուցվի այն ներդրումային ծրագրերի մասին, որոնց հիման վրա արդեն սկսվել են կառուցման կամ շահագործման դադարեցման աշխատանքներ, կամ որոնց վերաբերյալ կայացվել է վերջնական ներդրումային որոշում.
- 7) «Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրի (Եվրատոմի պայմանագիր) 41-րդ եւ 42-րդ հոդվածների համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտները պարտավորված են ծանուցել իրենց ներդրումային ծրագրերի մասին: Անհրաժեշտ է այդ տեղեկությունները լրացնել մասնավորապես ներդրումային ծրագրերի իրականացման վերաբերյալ պարբերաբար ներկայացվող հաշվետվություններով: Այդպիսի լրացուցիչ հաշվետվությունները չպետք է հակասեն Եվրատոմի պայմանագրի 41-44-րդ հոդվածներին: Այնուամենայնիվ, հնարավորինս պետք է խուսափել տնտեսավարող սուբյեկտների վրա պարտավորությունների մասով կրկնակի բեռ դնելուց.
- 8) որպեսզի Հանձնաժողովը հաստատուն եւ ամբողջական կարծիք կազմի Միության էներգետիկ համակարգի հետագա զարգացումների վերաբերյալ, անհրաժեշտ է ունենալ ներդրումային ծրագրերի վերաբերյալ

հաշվետվություններ ներկայացնելու ներդաշնակեցված համակարգ, որը հիմնված կլինի անդամ պետությունների կողմից փոխանցվող պաշտոնական տվյալների ու տեղեկությունների թարմացված կատեգորիաների վրա.

- 9) այս նպատակով անդամ պետությունները Հանձնաժողով ներկայացնում են այնպիսի տվյալներ եւ տեղեկություններ էներգետիկ ոլորտի՝ իրենց տարածքում ծրագրվող կամ կառուցման փուլում գտնվող էներգետիկ ենթակառուցվածքին առնչվող ներդրումային ծրագրերի մասին, որոնք վերաբերում են նավթի, բնական գազի, էլեկտրաէներգիայի, այդ թվում՝ վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի, քարածխից եւ գորշ ածխից ստացվող էլեկտրաէներգիայի, էլեկտրական եւ օգտակար ջերմային էներգիայի համակցված արտադրությանը, պահեստավորմանն ու փոխադրմանը, կենսավառելիքի արտադրությանը, ինչպես նաեւ ածխաթթու գազի որսմանը, փոխադրմանն ու պահեստավորմանը: Անդամ պետությունները նաեւ Հանձնաժողով են ներկայացնում տվյալներ եւ տեղեկություններ՝ երրորդ երկրների հետ էլեկտրաէներգիայի եւ գազի ցանցերը միավորելու մասով ներդրումային ծրագրերի մասին: Մասնակից տնտեսավարող սուբյեկտները պատասխանատու են այդպիսի տվյալներն ու տեղեկությունները շահագրգիռ անդամ պետությանը ներկայացնելու համար.
- 10) հաշվի առնելով էներգետիկայի ոլորտում ներդրումային ծրագրերի համար նախատեսված ժամանակահատվածը՝ բավարար կլինի, եթե հաշվետվությունները ներկայացվեն երկու տարին մեկ.
- 11) վարչական անհամաչափ բեռից խուսափելու եւ անդամ պետությունների ու տնտեսավարող սուբյեկտների, մասնավորապես՝ փոքր եւ միջին ձեռնարկությունների ծախսերը նվազեցնելու նպատակով սույն կանոնակարգով անդամ պետություններին ու տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն է տրվում ազատվելու հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունից, եթե Հանձնաժողովին արդեն

տրամադրվել են համարժեք տեղեկություններ՝ համաձայն Միության՝ էներգետիկ ոլորտը կարգավորող իրավական ակտերի, որոնք ուղղված են Միությունում մրցունակ էներգետիկ շուկաների, Միության էներգետիկ համակարգերի կայունության եւ Միության էներգամատակարարման անվտանգության նպատակների իրականացմանը: Ուստի պետք է խուսափել էլեկտրաէներգիայի եւ բնական գազի համար նախատեսված եւ ներքին շուկայի միջոցառումների երրորդ փաթեթով սահմանված՝ հաշվետվություն ներկայացնելու պահանջների ցանկացած կրկնօրինակումից: Հաշվետվություն ներկայացնելու բեռը թեթևացնելու համար Հանձնաժողովն օժանդակություն է ցուցաբերում անդամ պետություններին՝ նպատակ ունենալով հստակեցնել, թե որ դեպքերում է համարում, որ այլ իրավական ակտերի համաձայն Հանձնաժողով արդեն ներկայացված տվյալները կամ տեղեկությունները համապատասխանում են սույն կանոնակարգի պահանջներին.

- 12) Հանձնաժողովը եւ մասնավորապես դրա՝ էներգետիկայի գծով շուկայի ուսումնասիրության բաժինը հնարավորություն ունեն ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները՝ տվյալները մշակելու եւ տվյալների ներկայացման գործընթացը դյուրացնելու եւ անվտանգ դարձնելու համար, եւ մասնավորապես օգտագործելու SS գործիքների համալիր եւ ընթացակարգեր, որոնցով կերաշխավորվի Հանձնաժողով ներկայացվող տվյալների կամ տեղեկությունների գաղտնիությունը.
- 13) անդամ պետությունների կողմից անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանությունը կարգավորվում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 95/46/ԵՀ հրահանգով¹, մինչդեռ Հանձնաժողովի կողմից անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանությունը կարգավորվում է Եվրոպական պառլամենտի եւ

¹«Անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանության եւ այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 95/46/ԵՀ հրահանգ (ՊՏ L 281, 23.11.1995թ., էջ 31):

Խորհրդի թիվ 45/2001 (ԵՀ) կանոնակարգով¹: Սույն կանոնակարգով այդ դրույթները անփոփոխ են մնում.

- 14) անդամ պետությունները կամ դրանց կողմից պատվիրակված անձինք եւ Հանձնաժողովը պահպանում են առետրային գաղտնիք կազմող տվյալների ու տեղեկությունների գաղտնիությունը: Ուստի անդամ պետությունները կամ դրանց կողմից պատվիրակված անձինք նախքան այդ տվյալներն ու տեղեկությունները Հանձնաժողով ներկայացնելն ամփոփում են դրանք ազգային մակարդակով՝ բացառությամբ միջսահմանային փոխադրումների նախագծերին վերաբերող տվյալների ու տեղեկությունների: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը շարունակում է այդ տվյալներն ամփոփել այնպես, որ հնարավոր չլինի առանձին տնտեսավարող սուբյեկտների կամ կայանքների վերաբերյալ որեւէ տեղեկություն բացահայտել կամ դրա վերաբերյալ որեւէ հետեւություն անել.
- 15) Հանձնաժողովը եւ մասնավորապես դրա՝ Էներգետիկայի գծով շուկայի ուսումնասիրության բաժինը նախատեսում են Միության Էներգետիկ համակարգի կառուցվածքային զարգացման եւ հեռանկարների պարբերական եւ միջճյուղային վերլուծություն եւ անհրաժեշտության դեպքում՝ տվյալ Էներգետիկ համակարգի որոշ ասպեկտների մասին առավել խորը վերլուծություն: Այդ վերլուծությունը ենթակառուցվածքի եւ ներդրումների հետ կապված հնարավոր բացերը հայտնաբերելու միջոցով, մասնավորապես, նպաստում է Էներգետիկայի անվտանգության բարելավմանը՝ նպատակ ունենալով հավասարակշռություն ապահովել Էներգիայի առաջարկի եւ պահանջարկի միջեւ: Վերլուծությունը նաեւ նպաստում է Էներգետիկ ենթակառուցվածքների մասին Միության մակարդակով անցկացվող քննարկմանը եւ հետեւաբար ուղարկվում

¹ «Համայնքի հաստատությունների եւ մարմինների կողմից անձնական տվյալների մշակման մասով իրականացվող անհատների պաշտպանության եւ այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 45/2001 (ԵՀ) կանոնակարգ (ՊՏ L 8, 12.1.2001թ., էջ 1):

Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ եւ Տնտեսական ու սոցիալական հարցերով եվրոպական հանձնաժողով, ինչպես նաեւ հասանելի է դարձվում շահագրգիռ կողմերի համար.

- 16) փոքր եւ միջին ձեռնարկություններն իրենց ներդրումների ծրագրման համատեքստում կկարողանան օգուտ քաղել Հանձնաժողովի միջնուղային վերլուծությունից եւ սույն կանոնակարգին համապատասխան Հանձնաժողովի կողմից հրապարակված տվյալներից ու տեղեկություններից.
- 17) Հանձնաժողովին կարող են օժանդակել անդամ պետությունների փորձագետները կամ ցանկացած այլ իրավասու փորձագետ՝ ենթակառուցվածքում առկա հավանական բացերի եւ դրանց հետ կապված ռիսկերի վերաբերյալ համընդհանուր պատկերացում ձեւավորելու ու հետագա զարգացումների թափանցիկությունն ապահովելու նպատակով, ինչը հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում շուկա նոր մուտք գործող սուբյեկտների համար.
- 18) սույն կանոնակարգը փոխարինում է Խորհրդի (ԵՀ, Եվրատոմ) թիվ 617/2010 կանոնակարգին¹, որն անվավեր է ճանաչվել Արդարադատության դատարանի կողմից 2012 թվականի սեպտեմբերի 6-ին², եւ որը պետք է շարունակեր գործել մինչեւ նոր կանոնակարգն ուժի մեջ մտնելը: Ուստի սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահից թիվ 617/2010 (ԵՀ, Եվրատոմ) կանոնակարգն անվավեր ճանաչելը Դատարանի վճռով պետք է ուժի մեջ մտնի: Բացի այդ, Խորհրդի թիվ 736/96 (ԵՀ) կանոնակարգը³, որն ուժը կորցրած էր ճանաչվել թիվ 617/2010 (ԵՀ, Եվրատոմ) անվավեր ճանաչված կանոնակարգով, ուժը կորցրած է ճանաչվում սույն կանոնակարգով.

¹«Եվրոպական միությունում էներգետիկ ենթակառուցվածքների ոլորտում ներդրումային ծրագրերի մասին Հանձնաժողովին ծանուցելու մասին» եւ թիվ 736/96 (ԵՀ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդի 2010 հունիսի 24-ի թիվ 617/2010 (ԵՀ, Եվրատոմ) կանոնակարգ, (ՊՏ L 180, 15.07.2010թ., էջ 7):

²Արդարադատության դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 6-ի *Պատյամենյուն ընդդեմ Խորհրդի* [Parliament v Council] թիվ C- 490/10 գործով վճիռը (ECR 2012, էջ I-0000):

³ «Նավթի, բնական գազի եւ էլեկտրաէներգիայի ոլորտներում Համայնքի համար հետաքրքրություն ներկայացնող ներդրումային ծրագրերի մասին Հանձնաժողովին ծանուցելու վերաբերյալ» Խորհրդի 1996 թվականի ապրիլի 22-ի թիվ 736/96 (ԵՀ) կանոնակարգ (ՊՏ L 102, 25.4.1996թ., էջ 1):

- 19) Էներգետիկ ենթակառուցվածքների ոլորտում ներդրումային ծրագրերի մասին Հանձնաժողով տվյալներ եւ տեղեկություններ ներկայացնելու ձեւն ու տեխնիկական մանրամասները սահմանված են Հանձնաժողովի թիվ 833/2010 (ԵՀ, Եվրատոմ) կանոնակարգում¹ : Թիվ 833/2010 (ԵՀ, Եվրատոմ) կանոնակարգը կիրառվում է մինչեւ դրա վերանայումը, որը կհաջորդի սույն կանոնակարգի ընդունմանը.
- 20) Քանի որ սույն կանոնակարգի նպատակներն առանձին անդամ պետությունների կողմից չեն կարող բավարար չափով իրականացվել, սակայն, հաշվի առնելով դրանց մասշտաբն ու հետեւանքները, առավել արդյունավետ կիրականացվեն Միության մակարդակով, Միությունը կարող է միջոցներ ձեռնարկել «Եվրոպական միության մասին» պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված լրացուցչության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի համաձայն՝ սույն կանոնակարգով չի նախատեսվում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակներն իրագործելու համար,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում է ընդհանուր շրջանակ՝ նավթի, բնական գազի, էլեկտրաէներգիայի, այդ թվում՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի, քարածխից եւ գորշ ածխից ստացվող էլեկտրաէներգիայի եւ էլեկտրական եւ օգտակար ջերմային էներգիայի համակցված արտադրության ոլորտներում ներդրումային ծրագրերի, ինչպես

¹«Եվրոպական Միությունում էներգետիկ ենթակառուցվածքների ոլորտում ներդրումային ծրագրերի մասին Հանձնաժողովին ծանուցելու վերաբերյալ» Խորհրդի թիվ 617/2010 (ԵՀ, Եվրատոմ) կանոնակարգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 21-ի թիվ 833/2010 (ԵՀ, Եվրատոմ) կանոնակարգ(ՊՏ L 248, 22.9.2010թ., էջ 36):

նաեւ կենսավառելիքի արտադրության եւ այդ ոլորտներում արտադրվող ածխաթթու գազի որսման, փոխադրման ու պահեստավորման հետ կապված ներդրումային ծրագրերի վերաբերյալ տվյալներն ու տեղեկությունները Հանձնաժողով ներկայացնելու համար:

2. Սույն կանոնակարգը կիրառվում է հավելվածում թվարկված ներդրումային ծրագրերի այն տեսակների նկատմամբ, որոնց հիման վրա արդեն սկսվել են կառուցման կամ շահագործումը դադարեցնելու աշխատանքներ, կամ որոնց մասով կայացվել է վերջնական ներդրումային որոշում:

Անդամ պետությունները կարող են դրանից բացի ներկայացնել ցանկացած հաշվարկային տվյալ կամ նախնական տեղեկություն հավելվածում թվարկված ներդրումային ծրագրերի այն տեսակների վերաբերյալ, որոնց հիման վրա ծրագրվում է սկսել կառուցման աշխատանքներ հինգ տարվա ընթացքում, եւ այն ներդրումային ծրագրերի տեսակների վերաբերյալ, որոնց գործունեությունը ծրագրված է դադարեցնել երեք տարվա ընթացքում, սակայն որոնց մասով վերջնական ներդրումային որոշում չի կայացվել:

Հոդված 2

Սահմանումները

Սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

- 1) «ենթակառուցվածք» նշանակում է արտադրությանը, փոխադրմանն ու պահեստավորմանն առնչվող ցանկացած կայանք կամ կայանքի մաս, այդ թվում՝ Միության եւ երրորդ երկրների միջեւ միացումները.
- 2) «ներդրումային ծրագրեր» նշանակում է ծրագրեր, որոնք ուղղված են՝
 - i) նոր ենթակառուցվածքների ստեղծմանը.
 - ii) առկա ենթակառուցվածքների հնարավորությունները վերափոխելուն, արդիականացնելուն, մեծացնելուն կամ նվազեցնելուն.

- iii) առկա ենթակառուցվածքի շահագործման մասնակի կամ լրիվ դադարեցմանը.
- 3) «վերջնական ներդրումային որոշում» նշանակում է տնտեսավարող սուբյեկտի մակարդակով կայացված որոշում՝ ծրագրի ներդրումային փուլում վերջնականապես դրամական միջոցներ հատկացնելու նպատակով.
- 4) «ներդրումային փուլ» նշանակում է այն փուլը, որի ընթացքում տեղի է ունենում կառուցումը կամ շահագործման դադարեցումը, եւ կատարվում են կապիտալ ծախսեր. այն չի ներառում ծրագրման փուլը.
- 5) «ծրագրման փուլ» նշանակում է այն փուլը, որի ընթացքում նախապատրաստվում է ծրագրի իրականացումը, եւ որն անհրաժեշտության դեպքում ներառում է իրագործելիության գնահատում, նախապատրաստական եւ տեխնիկական ուսումնասիրություններ, արտոնագրերի ու թույլտվությունների ձեռքբերում եւ կապիտալ ծախսերի կատարում.
- 6) «կառուցման փուլում գտնվող օբյեկտների մասով ներդրումային ծրագրեր» նշանակում է ներդրումային ծրագրեր, որոնց հիման վրա արդեն ընթանում են կառուցման աշխատանքներ, եւ կատարվել են կապիտալ ծախսեր.
- 7) «շահագործման դադարեցում» նշանակում է փուլ, որի ընթացքում ենթակառուցվածքը վերջնականապես հանվում է շահագործումից.
- 8) «արտադրություն» նշանակում է էլեկտրաէներգիայի արտադրություն եւ վառելիքի, այդ թվում՝ կենսավառելիքի մշակում.
- 9) «փոխադրում» նշանակում է էներգիայի աղբյուրների կամ էներգետիկ ռեսուրսների կամ ածխաթթու գազի փոխադրում ցանցի միջոցով, մասնավորապես՝
- i) խողովակաշարերով՝ բացի ճնշումային խողովակաշարերի ցանցով եւ խողովակաշարերի այն հատվածով փոխադրումից, որը հիմնականում օգտագործվում է տեղական բաշխման դեպքում, կամ

- ii) չափազանց բարձր եւ բարձր լարման փոխկապակցված համակարգերի միջոցով՝ բացի այն համակարգերից, որոնք հիմնականում օգտագործվում են տեղական բաշխման դեպքում.
- 10) «որսալ» նշանակում է պահեստավորման նպատակով արտադրական կայանքներից ածխաթթու գազը որսալու գործընթացը.
- 11) «պահեստավորում» նշանակում է մշտական կամ ժամանակավոր հիմունքներով էներգիայի կամ էներգիայի աղբյուրների կուտակումը վերգետնյա կամ ստորգետնյա ենթակառուցվածքներում կամ երկրաբանական պահեստավորման վայրերում կամ ածխաթթու գազի պահումը ստորգետնյա երկրաբանական կազմավորումներում.
- 12) «տնտեսավարող սուբյեկտ» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական, մասնավոր կամ պետական հատվածում գործող անձ, որը որոշում է կայացնում ներդրումային ծրագրերի վերաբերյալ կամ իրականացնում է դրանք.
- 13) «էներգիայի աղբյուրներ» նշանակում է՝
- i) էներգիայի առաջնային այնպիսի աղբյուրները, ինչպիսիք են նավթը, բնական գազը կամ ածուխը.
 - ii) էներգիայի այնպիսի փոխակերպված աղբյուրներ, ինչպիսիք են էլեկտրականությունը.
 - iii) էներգիայի վերականգնվող աղբյուրները, այդ թվում՝ հիդրոէլեկտրաէներգիան, կենսազանգվածի, կենսագազի, քամու, արեւի, մակընթացության, ալիքների եւ երկրաջերմային էներգիան. եւ
 - iv) այնպիսի էներգետիկ ռեսուրսներ, ինչպիսիք են վերամշակված նավթամթերքը եւ կենսավառելիքը.
- 14) «հատուկ մարմին» նշանակում է մարմին, որին Միության՝ էներգիայի ոլորտը կարգավորող ցանկացած իրավական ակտով վերապահվել է Միության ամբողջ տարածքում էներգետիկ ենթակառուցվածքների մասով ցանցային

զարգացման եւ ներդրումների բազմամյա այնպիսի նախագծերի մշակում ու ընդունում, ինչպիսիք են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 714/2009 (ԵՀ) կանոնակարգի¹ 4-րդ հոդվածում նշված՝ Էլեկտրաէներգիայի փոխադրման համակարգի օպերատորների եվրոպական ցանցը ("ENTSO-E") եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 715/2009 (ԵՀ) կանոնակարգի² 4-րդ հոդվածում նշված՝ Բնական գազի փոխադրման համակարգի օպերատորների եվրոպական ցանցը ("ENTSO-G"):

- 15) «ամփոփ տվյալներ» նշանակում է մեկ կամ մի քանի անդամ պետությունների մակարդակով ամփոփված տվյալներ:

Հոդված 3

Տվյալներ ներկայացնելը

1. Տվյալների հավաքման եւ հաշվետվություն ներկայացնելու բեռի համաչափությունը պահպանելու սկզբունքը կիրառելիս անդամ պետությունները կամ այն անձինք, որոնց նրանք պատվիրակում են այդ հանձնարարության կատարումը, հավաքում են սույն կանոնակարգով պահանջվող բոլոր տվյալներն ու տեղեկությունները 2015 թվականի հունվարի 1-ից եւ այնուհետեւ յուրաքանչյուր երկու տարին մեկ:

Նրանք Հանձնաժողով են ներկայացնում սույն կանոնակարգով սահմանված՝ ծրագրին առնչվող տվյալներն ու համապատասխան տեղեկությունները 2015 թվականին, որը համարվում է առաջին հաշվետու տարի, այնուհետեւ հաշվետվությունները ներկայացվում են յուրաքանչյուր

¹«Էլեկտրաէներգիայի միջսահմանային փոխանակման ցանցին միանալու պայմանների մասին» եւ թիվ 1228/2003 (ԵՀ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 714/2009 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ L 211, 14.8.2009թ., էջ 15):

²«Բնական գազի փոխադրման ցանցերի հասանելիության պայմանների մասին» եւ թիվ 1775/2005 կանոնակարգը (ԵՀ) ուժը կորցրած ճամաչող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 715/2009 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ L 211, 14.8.2009թ., էջ 36):

երկու տարին մեկ: Տվյալները եւ տեղեկությունները ներկայացվում են ամփոփ ձեով՝ բացառությամբ միջսահմանային փոխադրման նախագծերին վերաբերող տվյալների ու տեղեկությունների:

Անդամ պետությունները կամ դրանց պատվիրակված անձինք նախագծին վերաբերող ամփոփ տվյալներն ու համապատասխան տեղեկությունները ներկայացնում են մինչեւ համապատասխան հաշվետու տարվա հուլիսի 31-ը:

2. Անդամ պետությունները կամ դրանց պատվիրակված անձինք ազատվում են 1-ին պարբերությամբ սահմանված պարտականություններից՝ պայմանով եւ այնքանով, որքանով Միության՝ էներգիայի ոլորտը կարգավորող իրավական ակտերի կամ Եվրատոմի պայմանագրի համաձայն՝

ա) շահագրգիռ անդամ պետությունը կամ դրա պատվիրակված անձն արդեն Հանձնաժողով է ներկայացրել սույն կանոնակարգով պահանջվող տվյալներին ու տեղեկություններին համարժեք տվյալներ ու տեղեկություններ եւ նշել է դրանց ներկայացման ամսաթիվն ու համապատասխան իրավական ակտը. կամ

բ) Միության մակարդակով ներդրումների բազմամյա ծրագրերի նախապատրաստումն էներգետիկ ենթակառուցվածքների ոլորտում վերապահվել է հատուկ մարմնի, եւ նշված մարմինն այդ նպատակով հավաքում է սույն կանոնակարգով պահանջվող տվյալներին ու տեղեկություններին համարժեք տվյալներ ու տեղեկություններ: Այս դեպքում եւ սույն կանոնակարգի նպատակներով հատուկ մարմինը Հանձնաժողով է ներկայացնում բոլոր համապատասխան տվյալներն ու տեղեկությունները:

Հոդված 4

Տվյալների աղբյուրները

Համապատասխան տնտեսավարող սուբյեկտները մինչև յուրաքանչյուր հաշվետու տարվա հունիսի 1-ը ներկայացնում են 3-րդ հոդվածում նշված տվյալներն ու տեղեկություններն այն անդամ պետություններ կամ դրանց պատվիրակված անձանց, որոնց տարածքում նախատեսում են իրականացնել ներդրումային ծրագրերը: Ներկայացված տվյալներն ու տեղեկություններն արտացոլում են ներդրումային ծրագրերի ընթացիկ վիճակը համապատասխան հաշվետու տարվա մարտի 31-ի դրությամբ:

Առաջին պարբերությունը տարածվում է տնտեսավարող սուբյեկտների վրա, եթե համապատասխան անդամ պետությունը որոշում է 3-րդ հոդվածում նշված տվյալներն ու տեղեկությունները Հանձնաժողովին տրամադրել այլ եղանակով՝ պայմանով, որ տրամադրված տվյալներն ու տեղեկությունները համեմատելի լինեն:

Հոդված 5

Ծանուցման բովանդակությունը

1. Հավելվածում նշված ներդրումային ծրագրերի տեսակների դեպքում 3-րդ հոդվածով նախատեսված ծանուցման մեջ անհրաժեշտության դեպքում նշվում է՝
 - ա) ծրագրվող կամ կառուցման փուլում գտնվող հզորությունների ծավալը.
 - բ) ծրագրվող կամ կառուցման փուլում գտնվող ենթակառուցվածքի կամ հզորության տեսակն ու հիմնական առանձնահատկությունները, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում՝ միջսահմանային փոխադրման նախագծերի իրականացման վայրը.
 - գ) շահագործումն սկսելու հնարավոր տարեթիվը.

- դ) օգտագործվող էներգիայի աղբյուրը.
- ե) մատակարարման ճգնաժամային իրավիճակի դեպքում էներգամատակարարումների հուսալիությունն ապահովելու հնարավորություն ունեցող սարքավորումները, օրինակ՝ բանեցրած ջրի հոսքն ապահովող կամ այլընտրանքային վառելիքի անցումն ապահովող սարքավորումները. եւ
- զ) ածխաթթու գազի որսման սարքավորումները կամ ածխաթթու գազի որսման եւ կուտակման վերասարքավորված մեխանիզմները:
2. Էներգահզորությունների շահագործումը դադարեցնելու վերաբերյալ ցանկացած առաջարկության դեպքում 3-րդ հոդվածով նախատեսված ծանուցման մեջ նշվում է՝
- ա) համապատասխան ենթակառուցվածքի բնույթն ու հզորությունը. եւ
- բ) շահագործումը դադարեցնելու հավանական տարեթիվը:
3. 3-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած ծանուցում անհրաժեշտության դեպքում ներառում է՝
- ա) արտադրության, փոխադրման եւ պահեստավորման սահմանված հզորությունների ընդհանուր ծավալը, որոնք առկա են համապատասխան հաշվետու տարվա սկզբում, կամ որոնց շահագործումն ընդհատվել է երեք տարին գերազանցող ժամկետով. եւ
- բ) ներդրումային ծրագրի իրականացման ուշացումների եւ (կամ) խոչընդոտների վերաբերյալ համապատասխան տեղեկություններ, եթե անդամ պետությունները, դրանց կողմից պատվիրակված անձինք կամ համապատասխան շահագրգիռ մարմինը տիրապետում է այդ տեղեկատվությանը:

Հոդված 6

Տվյալների որակն ու հրապարակայնությունը

1. Անդամ պետությունները, դրանց կողմից պատվիրակված անձինք կամ անհրաժեշտության դեպքում հատուկ մարմինները նպատակ ունեն ապահովելու Հանձնաժողով իրենց կողմից ներկայացվող տվյալների ու տեղեկությունների որակը, կարելիությունը, ճշգրտությունը, հստակությունը, ժամանակին ու կապակցված լինելը:

Տվյալներն ու տեղեկությունները հատուկ մարմինների կողմից ներկայացվելու դեպքում դրանց կարող են կցվել անդամ պետությունների կողմից տրամադրված համապատասխան մեկնաբանությունները:

2. Հանձնաժողովը կարող է հրապարակել սույն կանոնակարգի համաձայն ուղարկված ամփոփ տվյալներն ու տեղեկությունները, մասնավորապես՝ 10-րդ հոդվածի 3-րդ կետում նշված վերլուծությունները՝ պայմանով, որ առանձին տնտեսավարող սուբյեկտներին ու կայանքներին վերաբերող ոչ մի տեղեկություն չբացահայտվի, կամ դրա վերաբերյալ հնարավոր չլինի հետետություն անել:

3. Անդամ պետությունները, դրանց կողմից պատվիրակված անձինք կամ Հանձնաժողովը պահպանում են իրենց տրամադրության տակ գտնվող՝ առետրային գաղտնիք կազմող տվյալների կամ տեղեկությունների գաղտնիությունը:

Հոդված 7

Կիրարկման դրույթները

Սույն կանոնակարգով սահմանված շրջանակներում Հանձնաժողովը մինչև 2014 թվականի հունիսի 10-ը ընդունում է սույն կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ դրույթները, որոնք վերաբերում են 3-րդ եւ 5-րդ

հոդվածներում նշված տվյալների ու տեղեկությունների ծանուցման ձեւին եւ տեխնիկական այլ մանրամասների: Մինչ այդ շարունակում է կիրառվել թիվ 833/2010 (ԵՀ, Եվրատոմ) կանոնակարգը:

Հոդված 8

Տվյալների մշակումը

Հանձնաժողովը պատասխանատու է սույն կանոնակարգի համաձայն էներգետիկ ենթակառուցվածքների վերաբերյալ իրեն ծանուցվող տվյալների կամ տեղեկությունների ստացման, կուտակման ու մշակման համար անհրաժեշտ ՏՏ ռեսուրսների մշակման, ընդունման, կառավարման եւ պահպանման համար:

Հանձնաժողովը նաեւ ապահովում է, որ առաջին պարբերության մեջ նշված ՏՏ ռեսուրսներով երաշխավորվի սույն կանոնակարգի համաձայն իրեն ծանուցվող տվյալների կամ տեղեկությունների գաղտնիությունը:

Հոդված 9

Անձանց պաշտպանությունը տվյալների մշակման մասով

Սույն կանոնակարգը չի հակասում Միության իրավունքին եւ մասնավորապես չի փոփոխում 95/46/ԵՀ հրահանգով սահմանված՝ անդամ պետությունների պարտավորությունները՝ անձնական տվյալների մշակման մասով, կամ թիվ 45/2001 (ԵՀ) կանոնակարգով Միության հաստատությունների ու մարմինների վրա դրված պարտավորությունները՝ իրենց պարտականությունները կատարելու ընթացքում վերջիններիս կողմից անձնական տվյալների մշակման մասով:

*Հոդված 10***Մշտադիտարկումը եւ հաշվետվություններ ներկայացնելը**

1. Ուղարկված տվյալների ու տեղեկությունների եւ անհրաժեշտության դեպքում տվյալների այլ աղբյուրների, այդ թվում՝ Հանձնաժողովի կողմից ձեռք բերված տվյալների հիման վրա եւ հաշվի առնելով համապատասխան վերլուծությունները, ինչպիսին է գազի եւ էլեկտրաէներգիայի համար նախատեսված ցանցային զարգացման գործողությունների բազմամյա ծրագրերը՝ Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ եւ Տնտեսական ու սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտե է ուղարկում եւ յուրաքանչյուր երկու տարին մեկ հրապարակում Միության էներգետիկ համակարգի կառուցվածքային զարգացման եւ հեռանկարների միջճյուղային վերլուծություն: Այդ վերլուծությունը մասնավորապես նպատակաուղղված է հետեւյալին.

ա) Միության էներգետիկայի ոլորտի քաղաքականության, այդ թվում՝ ներքին էներգետիկ շուկայի գործունեության համար կարելու նշանակություն ունեցող՝ էներգիայի առաջարկի եւ պահանջարկի միջեւ հետագա հնարավոր բացերի հայտնաբերում՝ շեշտը դնելով արտադրության եւ փոխադրման հետագա հավանական սխալների ու թերությունների վրա.

բ) ներդրումների կատարման խոչընդոտների հայտնաբերում եւ այդ խոչընդոտները վերացնելու համար լավագույն փորձի խթանում. եւ

գ) շուկայի մասնակիցների եւ շուկա մուտք գործող հավանական սուբյեկտների համար թափանցիկության մեծացում:

Այդ տվյալների ու տեղեկությունների հիման վրա՝ Հանձնաժողովը կարող է նաեւ տրամադրել անհրաժեշտ կամ համապատասխան համարվող հատուկ վերլուծություն:

2. 1-ին պարբերությունում նշված վերլուծությունները նախապատրաստելիս Հանձնաժողովին կարող են օժանդակել անդամ պետությունների փորձագետներ եւ (կամ) տվյալ տարածքում հատուկ իրավասություն ունեցող այլ փորձագետներ, մասնագիտական միավորումներ:

Հանձնաժողովը պետք է բոլոր անդամ պետություններին հնարավորություն տա մեկնաբանություններ ներկայացնել վերլուծությունների նախագծի վերաբերյալ:

3. Հանձնաժողովը վերլուծությունները քննարկում է շահագրգիռ կողմերի հետ, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի փոխադրման համակարգի օպերատորների եվրոպական ցանցի, Գազի փոխադրման համակարգի օպերատորների եվրոպական ցանցի, Գազի համակարգման խմբի եւ Նավթի մատակարարման խմբի հետ:

Հոդված 11

Վերանայումը

Մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգի կիրարկումը եւ վերանայման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնում Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ: Վերանայման ընթացքում Հանձնաժողովը, ի թիվս այլնի, ուսումնասիրում է՝

- ա) սույն Կանոնակարգի շրջանակների հնարավոր ընդլայնումը՝ կանոնակարգի գործողությունը տարածելով նաեւ հետեւյալի վրա՝
- i) գազի, նավթի եւ ածխի արդյունահանում.
 - ii) սեղմված բնական գազի համար տերմինալներ.
 - iii) էլեկտրաէներգիայի պահեստավորման լրացուցիչ տեսակներ. եւ
- բ) այն հարցը, թե արդյոք վերականգնվող էներգիայի կայանքների սահմանային թույլատրելի շեմերը պետք է նվազեցվեն:

Այդ տարբերակներն ուսումնասիրելիս Հանձնաժողովը հաշվի է առնում ավելացող վարչական բեռի եւ լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերելու առավելությունների միջեւ հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությունը:

Հոդված 12

Ուժը կորցրած ճանաչելը

Թիվ 736/96 (ԵՀ) կանոնակարգն ուժը կորցրած է ճանաչվում 2014 թվականի ապրիլի 9-ից:

Հոդված 13

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում *դրա հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը*:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Ստրասբուրգում 2014 թվականի փետրվարի 26-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ

Մ. ՇՈՒԼՑ

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Դ. ԿՈՒՐԿՈՒԼԱՍ

*ՀԱՎԵԼՎԱԾ***ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ**

1. ՆԱՎԹ

1.1. Վերամշակում

- Տարեկան կտրվածքով առնվազն 1 մլն տոննա հզորությամբ թորման կայաններ,
- տարեկան կտրվածքով ավելի քան 1 մլն տոննա թորման հզորության ընդլայնում,
- օրական կտրվածքով 500 տոննա նվազագույն հզորությամբ ռեֆորմինգի (ճեղքաթորման) գործարանային կայաններ,
- մնացորդային մազութի, գազայուղի, նավթահումքի, այլ նավթամթերքի ծծմբազերծման կայաններ:

Ցանկը չի ներառում քիմիական կայանները, որոնք մազութ եւ (կամ) շարժիչային վառելիք չեն արտադրում կամ դրանք արտադրում են միայն որպես կողմնակի արտադրանք:

1.2. Փոխադրումներ

- Տարեկան կտրվածքով առնվազն 3 մլն մետրիկ տոննա հզորությամբ՝ անմշակ նավթի խողովակաշարեր եւ առնվազն 30 կիլոմետր երկարություն ունեցող խողովակաշարերի երկարացում կամ դրանց ցանցի ընդլայնում,
- տարեկան կտրվածքով առնվազն 1.5 մլն մետրիկ տոննա հզորությամբ՝ նավթամթերքի խողովակաշարեր եւ առնվազն 30 կիլոմետր երկարություն ունեցող խողովակաշարերի երկարացում կամ դրանց ցանցի ընդլայնում,

— «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի (ԵՄԳՊ) 171-րդ հոդվածով սահմանված ուղեցույցներում նշված՝ ազգային կամ միջպետական նշանակության փոխկապակցված էներգետիկ ցանցերում կարելու օղակ հանդիսացող խողովակաշարեր եւ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խողովակաշարեր ու նախագծեր:

Ցանկում ներառված չեն ռազմական նպատակներով օգտագործվող խողովակաշարերը եւ այն խողովակաշարերը, որոնցով իրականացվում է 1.1. կետի գործողության ոլորտից դուրս գտնվող կայանների մատակարարումը:

1.3. Պահեստավորում

— Անմշակ նավթի ու նավթամթերքի պահեստավորման համար նախատեսված պահեստարաններ (150 000 մ³ կամ ավելի տարողությամբ, իսկ ցիստեռների դեպքում՝ առնվազն 100 000 մ³ տարողությամբ կայանքներ):

Ցանկում ներառված չեն ռազմական նպատակների համար նախատեսված ցիստեռներն ու այն ցիստեռները, որոնցով իրականացվում է 1.1. կետի գործողության ոլորտից դուրս գտնվող կայանների մատակարարումը:

2. ԳԱԶ

2.1. Հաղորդումը

— Գազի, այդ թվում՝ բնական գազի եւ կենսագազի փոխադրման խողովակաշարերը, որոնք կազմում են հիմնականում բարձր ճնշման խողովակաշարեր պարունակող ցանցի մաս՝ բացառությամբ այն խողովակաշարերի, որոնք վերընթաց խողովակաշարերի ցանցի մաս են կազմում, եւ բացառությամբ բարձր ճնշման խողովակաշարերի այն մասի, որը հիմնականում օգտագործվում է բնական գազի տեղական բաշխման համար,

- ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խողովակաշարեր ու նախագծեր, որոնք նշված են ԵՄԳՊ 171-րդ հոդվածի համաձայն սահմանված ուղեցույցներում:

2.2. Հեղուկացված բնական գազի (ՀԲԳ) տերմինալներ

- Տարեկան կտրվածքով 1 միլիարդ մ³ եւ ավելի վերագազաֆիկացման հնարավորությամբ՝ ՀԲԳ-ի ներմուծման համար նախատեսված տերմինալներ:

2.3. Պահեստավորում

- 2.1 կետում նշված փոխադրման խողովակաշարերին միացված պահեստարաններ:

Ցանկում ներառված չեն ռազմական նպատակներով օգտագործվող գազի խողովակաշարերը, տերմինալները եւ կայանքները, ինչպես նաեւ քիմիական կայանքներ մատակարարվող գազի խողովակաշարերը, տերմինալները եւ կայանքները, որոնք էներգակիրներ չեն արտադրում կամ դրանք արտադրում են որպես կողմնակի արտադրանք:

3. ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1. Արտադրություն

- Ջերմաէլեկտրակայաններ եւ ատոմակայաններ (100 կամ ավելի ՄՎտ հզորությամբ գեներատորներ),
- կենսազանգվածից, կենսահեղուկներից, թափոններից ստացվող էներգիայի արտադրության սարքավորումներ (20 կամ ավելի ՄՎտ հզորությամբ),
- էլեկտրական եւ օգտակար ջերմային էներգիայի համակցված արտադրության էլեկտրակայաններ (20 կամ ավելի ՄՎտ էլեկտրական հզորությամբ կայանքներ),

- հիդրոէլեկտրակայաններ (30 կամ ավելի ՄՎտ հզորությամբ կայանքներ),
- 20 կամ ավելի ՄՎտ հզորությամբ հողմակայաններ,
- կենտրոնացված արեւաջերմային ու կենսաջերմային կայանքներ (20 կամ ավելի ՄՎտ հզորությամբ),
- ֆոտովոլտային կայանքներ (10 կամ ավելի ՄՎտ հզորությամբ):

3.2. Հաղորդումը

- էլեկտրահաղորդման օդային գծեր, եթե դրանք նախագծված են ազգային մակարդակով էլեկտրահաղորդման միջցանցային գծերում սովորաբար օգտագործվող լարման համար՝ պայմանով, որ դրանք նախագծված են 220 կամ ավելի կՎտ լարման համար,
- ստորգետնյա կամ ստորջրյա հաղորդման գծեր, եթե դրանք նախագծված են 150 կամ ավելի կՎտ լարման համար,
- ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նախագծեր, որոնք նշված են ԵՄԳՊ 171-րդ հոդվածի համաձայն սահմանված ուղեցույցներում:

4. ԿԵՆՍԱՎԱՌԵԼԻՔ

4.1. Արտադրություն

- Կենսավառելիք արտադրելու կամ վերամշակելու հնարավորություն ունեցող կայանքներ (տարեկան 50 000 կամ ավելի տոննա հզորությամբ կայանքներ):

5. ԱԾԽԱԹԹՈՒ ԳԱԶ

5.1. Փոխադրումներ

- 1.1 եւ 3.1 կետերում նշված արտադրման կայանքներին միացված ածխաթթու գազի խողովակաշարեր:

5.2. Պահեստավորում

— Պահեստարաններ (100 կտ կամ ավելի հզորությամբ պահեստավորման վայր կամ պահեստավորման համալիր),

Ցանկում չեն ներառվում գիտահետազոտական աշխատանքի կամ տեխնիկական զարգացման համար նախատեսված պահեստարանները:
